30.01.24 - 31.01.24
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճ

Ս.թ. հունվարի 30-ին՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում կտրվի «Էրազմուս+» ծրագրի շրջանակում իրականացվող «Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» (KPI4HE) նախագծի մեկնարկը:

Միջոցառման ժամանակ կքննարկվեն բարձրագույն կրթության համակարգի կառավարմանն ու համալսարանների ռազմավարական պլանավորմանն առնչվող մի շարք հարցեր, որոնք կնպաստեն որակյալ ու ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության զարգացմանը Հայաստանում:

Միջոցառմանը ներկա կլինեն ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Վասիլիս Մարագոսը, Հայաստանում «Էրազմուս+» ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am